# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**2019թ-ի սեպտեմբերի 5-ին կնքված N «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-19/21-1» ծածկագրով՝ Պետության կարիքների համար տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի**

ք.Երևան

« 24 » դեկտեմբերի 2019թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի պաշտոնակատար Վ.Պապիկյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Վ.Կնյազյանի, (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 12-ի N 1770-Ն որոշումը և ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-19/21-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## *1. Համաձայնագրի առարկան*

Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին.

1.1 Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման վերջնաժամկետը սահմանել 2020 թվականի մարտի 31-ը ներառյալ:

1.2 Պայմանագրի ընդհանուր գինն ավելացնել 266 000 (երկու հարյուր վաթսունվեց հազար) ՀՀ դրամի չափով և Պայմանագրի 4.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 955 000 (ինը հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը::»

1.3 Հաստատել Համաձայնագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը համաձայն NN 1 և 1.1 Հավելվածների:

## *2. Այլ պայմաններ*

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2019 թվականի դեկտեմբերի 10-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 1.1 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

## *3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Վարչապետի աշխատակազմ | Ա/Ձ Վահրամ Կնյազյան |
| ք.Երևան, Հանրապետության հրապ., | ՀՀ Շիրակի մարզ, ք. Արթիկ, |
| Կառավարական տուն 1 | Բաղրամյան փող., 1շ., բն. 2 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | ՎՏԲ Հայաստան Բանկ ՓԲԸ 10մ/ճ |
| Հ/Հ 900011022085 | ՀՀ 16067009230500 |
| ՀՎՀՀ 02505554 | ՀՎՀՀ 61718934 |
| _____ | _____ |
| / ստորագրություն / | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված թիվ 1
« 05 » սեպտեմբերի 2019թ. կնքված
ՀՀԿԱ-ԳՀԾՁԲ-19/21-1 ծածկագրով պայմանագրի
« 24 » դեկտեմբերի 2019թ. կնքված
N 1 Համաձայնագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | 71351540/1 | Տեխնիկական հսկողության ծառայություններ՝ համաձայն Հավելված 1.1-ի | դրամ | 689 000 | 1 | ք. Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 1 | 2019 թվականի դեկտեմբերի 25-ը |
| | | | | 266 000 | | | ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2020 թվականի մարտի 31-ը ներառյալ |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապ.,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

---
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
Ա/Ձ Վահրամ Կնյազյան
ՀՀ Շիրակի մարզ, ք. Արթիկ,
Բաղրամյան փող., 1շ., բն. 2
ՎՏԲ Հայաստան Բանկ ՓԲԸ 10մ/ճ
ՀՀ 16067009230500
ՀՎՀՀ 61718934

---
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1.1
« 05 » սեպտեմբերի 2019թ. կնքված
ՀՀԿԱ-ԳՀԾՁԲ-19/21-1 ծածկագրով պայմանագրի
« 24 » դեկտեմբերի 2019թ. կնքված
N 1 Համաձայնագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

## Տեխնիկական հսկողության ծառայությունների

***Աշխատանքի տեսակը*** -Ըստ ծավալաթերթ-նախահաշվի , որը կցվում է

**Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ**

- Իրականացնել ամենօրյա տեխնիկական հսկողություն՝ համաձայն քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանում բերված դրույթների՝ ապահովելով Ծառայությունը մատուցողի կողմից նշանակված տեխնիկական հսկիչի ամենօրյա ներկայությունը աշխատանքային տեղամասերում (ընդ որում տեխնիկական հսկիչը պետք է ընդգրկված լինի Ծառայությունը մատուցողին տրված լիցենզիայի պատասխանատու անձանց ներդիրում): Տվյալ աշխատանքային տեղամասում նշանակված տեխնիկական հսկիչի անհարգելի բացակայության դեպքում Ծառայություն մատուցողը պայմանագրով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:
- Հսկել իրականացվող աշխատանքների ընթացքը, համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ աշխատանքային նախագծին, կապալի պայմանագրի դրույթներին և գործող նորմերին
- Հաստատել և հսկել աշխատանքների իրականացման ծրագիրը
- Ստուգել և հսկել նյութերի որակը և իրականացվող աշխատանքների ընթացքը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պահանջներին
- Գնահատել և հսկել իրականացվող աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի աշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի
- Ստուգել բոլոր այն լաբորատոր փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար
- Ստուգել բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումներն իրականացնելու համար:
- Կատարել որակի և կատարված աշխատանքների ծավալի ամենօրյա հսկում: Հաստատել վճարման հավաստագրերը, եթե աշխատանքները կատարվել են անհրաժեշտ որակով և ծավալով:
- Կապալառուին պարզաբանել նախագծային փաստաթղթերի հետ կապված հարցերը:
- Իրականացնել հսկողություն աշխատանքային տեղամասերում՝ աշխատանքների անվտանգությունը ապահովելու նպատակով: Հրահանգել կապալառուին ապահովել աշխատանքային տեղամասերում անհրաժեշտ նշանների, լուսավորության, անվտանգության այլ միջոցների առկայությունը:
- Կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի տեխնիկական հսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների օրական հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր):
- Ստուգել և հաստատել կապալառուի կողմից նախապատրաստված կատարողական գծագրերը:

**Հաշվետվության ներկայացման պահանջներ**

- Կատարողը պարտավոր է Պատվիրատուին ներկայացնել Ծառայությունների վերաբերյալ **ընթացիկ և ավարտական հաշվետվություններ**, որոնք հանդիսանում են Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր:
- ***Ընթացիկ հաշվետվությունները*** ներկայացվում են իրականացվող աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտի ժամանակահատվածին համապատասխան՝ ընդգրկելով իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված աշխատանքների և տեխ.հսկողության ծառայությունների վերաբերյալ, տեղեկանք (Ձև 2), լաբորատոր փորձարկումների արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով), սխեմաներ, թույլտվություններ, և այլ անհրաժեշտ փաստաթղթեր): Ընթացիկ հաշվետվությունները ներկայացվում են իրականացվող աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ:

***Ավարտական հաշվետվությունը*** պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական

| |
|---|
| կատարողական գծագրեր, ավարտական կատարողական ակտ, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, ավարտված օբյեկտի լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով): Ավարտական հաշվետվությունը ներկայացվում է իրականացված աշխատանքների ավարտական կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում: |
| Տեխնիկական հսկողության ծառայություններն իրականացնել ՀՀ օրենսդրության ու իրավական ակտերի պահանջներին համաձայն |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապ.,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
Ա/Ձ Վահրամ Կնյազյան
ՀՀ Շիրակի մարզ, ք. Արթիկ,
Բաղրամյան փող., 12., բն. 2
ՎՏԲ Հայաստան Բանկ ՓԲԸ 10մ/ճ
ՀՀ 16067009230500
ՀՎՀՀ 61718934

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՀՐԱՄ ԿՆՅԱԶՅԱՆ
VAHRAM KNYAZYAN
ВАГРАМ КНЯЗЯН
61718934